ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> 03 2013թ. N: 78-Կ ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԲԱՎՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Արմեն Վարդանյանի 2013 թվականի մարտի 25-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2013 թվականի մարտի 28-ից զբաղեցրած պաշտոնից ազատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Արմեն Վարդանյանին:

2. 2013 թվականի մարտի 28-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Բավրայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Արմեն Վարդանյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝